

Թիւ 3214
Նոյեմբեր 15, 1961

Արժանաշնորհ
Տ. Առնակ ԱՀՆԵ. Գառապարեան,
Հոգեւոր Հովիւ Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ,
Տիֆլիզի.

Սիրելի Տէր Առնակ.

Փիթսպորդէն /Փէնսիլվանիա/ բժիշկ Լահան Սեւ յօնքեան, որ Սարկաւազի
աստիճան ունի, եւ կերելի թէ վերջերս Քալիֆորնիան հոն փոխադրուած է, փա-
փաք կը յայտնէ ամէն կիրակի ժամերգութիւն կատարել տեղւոյն Եպիսկոպոսական
Եկեղեցիին մէջ հոն բնակող մէկ-երկու հայ ընտանիքներուն համար: Անոնցմէ
մին Տիկին Վահանեան փափաք յայտնած է Ս. Հաղորդութիւն ստանալ:

Նկատելով որ Փիթսպորդի ամենէն մօտիկ հայ եկեղեցին հիվելէնտի հա-
մայնքն է. ուստի, դուք իբրեւ այցելու հովիւ, կարգադրեցէք որ գոհացում
տրուի իր բարի փափաքին: Եթէ Ձեզի համար անհնար է հոն այցելել, բազառիկ
արտօնութեամբ՝ Սարկաւազին միջոցաւ՝ գոհացում տուէք բարեպաշտ կնոջ փափաքին:

Այո առթիւ, ուրախ եմ Ձեզի հաղորդելու թէ Ս. Էջմիածնէն մեզի հետ
բերինք թահնալական 4 լանջախաղեր, զորս խոստացաւ Վեհափառ իր անցեալ տա-
րուան այցելութեան առթիւ, որոնցմէ մին Ձեզն է: Կը փափաքինք յարմար առիթով
մը, անձամբ Ձեզի յանձնել՝ յատենի Եկեղեցւոյ:

Սեր սիրայ իր ողջոյնները հաղորդեցէք Տէր Տիրանին, ու Պատուարժան
Սխական Խորհուրդին:

Տիրաւանդ սիրով
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Բժիշկ Տ. Սեւ յօնքեանի հասցէն է՝

Dr. Sahak Sevhonkian,
216 Chesterfield Road,
Pittsburgh 13, Pa.
(Telephone:- WU 1-0131)

Թիւ 3215
Նոյեմբեր 15, 1961.

Մեծայարդ
Բժիշկ Մահան Սեւոյեան,
Փիթսպորկ, Անսիլվէնիա.

Սիրելի Բժիշկ Մ. Սեւոյեան,

Ձեր նոյեմբեր 12 թուակիր նամակը անակնկալ մըն էր մեզի համար, որովհետեւ որեւէ չուր չուէինք այդ մասին: Մեծ հետաքրքրութեամբ կարողացինք Ձեր նամակներուն պատճէնները ուղղուած գանազաններու: Ուրախ ենք յոյս, որ դուք՝ իբրեւ հաւատարիմ զաւակ եւ Սարկաւագ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, նախանձախնդիր էք մեր Եկեղեցւոյ աւանդութեանց եւ արարողութեանց, ու կը շանք վառ պահել Լուսաւորչի հաւատքը Փիթսպորկի թանի մը հայերու սիրտին մէջ:

Ինչպէս կ'ենթադրեմ, թանի որ Ձեզի ամենէն մօտ հայ համայնքը Գլիվ-լէնտի Եկեղեցին է, դուք անոնց հոգաբարձութեան եւ այցելու հովիտին հետ պէտք է յարաբերութեան մէջ ըլլաք: Ձեր կրօնական կարիքներուն համար:

Ուստի, այսու կը շննդարարենք Ձեզի որ հաղորդակցութեան մէջ մտնէք Արժանաշնորհ Տ. Առնակ ԲՀՆՅ. Գասպարեանի հետ, որ Տիթրոյթ կը բնակի, 50 Rhode Island, Highland Park 3, Michigan
եւ այցելու հովիտն է Գլիվլէնտի համայնքին, ու եթէ քացարձակ անհրաժեշտ պարագայ ներկայանայ, երբ անիկա չկարենայ հոտ գալ հաղորդութիւն տալ ու համար, իրեն հետ կարգադրէք պատշաճը: Սենք այս մասին կը հրահանգենք իրեն:

Իբրեւ Սարկաւագ Հայաստանեայց Եկեղեցւոյ, Ձեզի կ'արտօնենք որ Կիրակի օրերը ժամերգութիւն կատարէք տեղւոյդ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ մէջ՝ ի միութարութիւն Ձեզի ու միւսներուն:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օրհնութիւնները եւ շնորհք Աստուածային:

Մնամք Հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Յ.Գ.- Փիթսպորկի Հայ Համայնք գրել, թանի որ Եկեղեցի եւ շէնք չկայ տակաւին:

Ս.Ա.

Dr. Shahan Sevhonkian
216 Chesterfield Rd.
Pittsburgh 13, Pa.
Phone: MU 1-0131

12 նոյեմբեր 1961

Գերաշնորհ

Տէր Սիոն Սրբազան Արքեպիսկոպոս Մանուկեան՝
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկայի Հայոց,
Առաջնորդարան Հայոց՝

նիւ Եօրթ, նիւ Եօրթ

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ներփակ հաճեցէք գտնել պատճէն մը՝ քալիփօրնիոյ Առաջնորդ
Բաբգէն Սրբազանի ուղարկած 17 չոկտեմբեր թուակիր նամակիս, ինչպէս
նաեւ իր 24 չոկտեմբեր թուակիր պատասխանին: Նաեւ պատճէններ՝
Բլիվլէնտի Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Վահանեաններու
Հրաւերի նախագիծ-պատճէն մը:

Կը խնդրեմ որ բարեհաճիք ինձ հաղորդել թէ՛

Ա. քահանայի բացակայութեան ես կընամ հաղորդութիւն տալ:

Բ. եթէ ոչ՝ ինչ կեղպով կարելի է գոհացում տալ Տիկին Վահանեանի
հաղորդութիւն առնելու արդար փափաքին: Իսկ եթէ այո՝
ինչպէս կընամ ունենալ Ա. հաղորդութիւն:

Գ. ինչ կը խորհիք ներփակեալ հրաւերի նախագիծ-պատճէնին մասին:
Շատ ուրախ կ'ըլլամ եթէ բարեհաճիք ձեր դիտողութիւններն
ու թելադրանքները ինձ հաղորդել:

Կանխապաշտ շնորհակալութեամբ,

Մատչելով ի սուրբ Աջն քեր

Ք. Շահան Սեւոնքեան

Ք. Շահան Սեւոնքեան

Dr. Shahan Gevhonkian
216 Chesterfield Rd.
Pittsburgh 13, Pa.

17 Հոկտեմբեր 1961

Գերապատիւ

Տօքթօր Թաթևէն Եպիսկոպոս Վարժապետեան
Ռարիխեամ Առաջնորդ Զալիեօրնիոյ Հայոց՝
Լօս Անճէլըս, Զալիեօրնիա

Գերապատիւ Սրբազան Հայր.

Օգոստոս շրին երբ օրթակօի Եկեղեցին գացի, Զահանան
Հարցուց թէ ես Կիսասարկաւագ, Սարկաւագ թէ Աւագ Սարկաւագ եմ:
Ըսի թէ այդ երեքին տարբերութիւնները կատարեալ չէի գիտեր,
եւ խնդրեցի որ բացատրէ, սակայն ինք եւս չկրցաւ:

Նայն Հարցումը անկէ առաջ ալ Կինս ըրած էր եւ չէի կրցած
պատասխանել, ու կրնայ յառաջիկային կրկին ներկայանալ: Ուստի
կը խնդրեմ որ բարեհաճիք ինձ Հաղորդել գլխաւոր տարբերութիւնները
այդ երեքին: Ըսեմ նաեւ որ մէկ կամ երկու Զահանայ Հայրերու
Հարցուցած եմ եւ որոշ պատասխան չեմ ստացած: Դաեւ Հանգուցեալ
Տէր Ռոման Զահանան Երէզնօյի մէջ տարօրինակ վէճ մը ունեցած է
Խուպաթեան յարկաւագին հետ այս մասին:

Այս առթիւ ըսեմ նաեւ որ հոս լյան շօզէէն աւելի խեղճութիւն
կը տիրէ Եկեղեցական տեսակետով: Անշուշտ կարելիս կ'ընեմ, սակայն
ընաւ յայս շունիմ որ լյան շօզէի աստիճանին կարենամ հասցնել:

Ներքակ ցեզ կ'ուզարկեմ պատճենը նամակի մը որ հետաքրքրական
կրնայ ըլլալ իբր բացառիկ նմոյշ մը այստեղի կեանքին: Այդ
ընտանիքը ճանչցայ ռզլէնտի ո. Թակոբ Ալէքսանեանի միջոցաւ՝
երբ ինձ հետ նամակ մը ուզարկեց իր քրոջ՝ Տիկին Վահանեանի:
Այս առթիւ կը փափայեմ հարցնել հոն յիշուած Հարցումը թէ
Զահանայի բացակայութեան ես իրաւունք ունիմ հաղորդութիւն տալու:
Եթէ այո՝ ինչպէս կրնամ հաղորդութիւն ունենալ: Եթէ ոչ՝ ինչ
կերպով կարելի է գահացում տալ նման հաւատացեալի մը փափային:

Որդիական Ալեանծանօք
Մատչելով ի Սուրբ Աջն ցեր

Բժ. Մահան Սելջօնքեան

Dr. Shahan Sevkhonkian
216 Chesterfield Rd.
Pittsburgh 13, Pa.

16 Հոկտեմբեր 1961

Ազնուայարգ

Տեր և՛ սրբին շահանեան՝

Ռիթսուուրկ

Գարաբ կ'զգամ յայտնել սրանշարունս եւ խոր գնահատանցս
պիտեալ կերակի. Յ Հոկտեմբերին ձեր յայտնարարակ շեքիտանդ
հաւատարեակի ոգիին համար:

Արգարեւ, ինչ համար մեն գահուճակութիւն եւ նկատել
հետեւեալները.-

1.- քաջու գրտին շատ հասկնալի կերպով ձեր կողմէ--ՏԿ. Վ.--
բնթերցումը:

2.- քաջի կենալնիդ՝ ամբողջ տեսողութեան, հակառակ որ կանխա-
բան էի թէ պարտաւոր չէիք:

3.- քեր երկուքին ալ վարժ մասնակցութիւնը՝ ժամերգութեանց:

4.- ՏԿ. Վ.ի անկեղծ արտայայտութիւնը թէ 7 12 տարիկանէ
ի վեր այսքան մտէն չէի հետեւած շայ նկեղեցւոյ ժամերգութեանց:

5.- քեր երկուքին անկեղծ արտայայտութիւնը թէ " քարիններ
ի վեր աւելնորնիս չէր օրհնուած: "

6.- 90. Վ.ի ինքնարդարացման արտայայտութիւնը՝ թէ խոցովանի
պարտականութեանը համար ստիպուած էր նկեղեցին չ'աւարտած մնկնել,
մինչդեռ ես կը խորհէի թէ 45 վայրկեան քաջի կենալով անհանգիստ
կամ յոգնած զգալուն համար էր մնկնած:

7.- ՏԿ. Վ.ի հազարգութիւն առնելու փափաքով հարցնելը թէ
հազարգութիւն բերած եմ հետո:

Անկեղծեղով այս վերջնայն՝ սրբազան չոր պիտի հարցնեմ նախ
թէ շահանայ չոր բացակայութեան եւ իրաւունք ունի՞ հազարգութիւն
աւելու. ջեզ անգեակ կը պահեմ պատասխանին:

Թէի ազգներն զլլալնիս անպատեհութիւն կը նկատէիս այգորը
եւ տհաճութեամբ կը հազարգէիք թէ մի քանի հոգիի որ ըսիք չ'ուզեցին
զալ՝ ես այդ պարզան աւելի գահուճակութեամբ է որ գիմաւորեցի,
որովհետեւ առանձին աւելի ազատ եզանց շայ նկեղեցւոյ ժամերգութիւնները
աւելի հարազատօրէն զգալու հոգեւին՝ մինչդեռ այլոց ներկայութեան
թերեւս ստիպուէին կրկնուել: Զտառշիկային առիթներ կ'ուսնենանք
ուրիշներու ներկայութեան եւս ազօթելու, բայց այս առաջինը մենք մեզի
աւելի լաւ եզաւ:

Երեկ հրաւիրուած էի Ռժ. Եարտըմեաննեց: Կային նաեւ ուրիշ
երկու բծիշկներ՝ իրենց սրկիւններով: Ութ հոգի էինք եւ ութ
տեսակ կրօնքի կը պատկանէինք: Որոշեցին որ ես ազօթեմ ճաշէն
առաջ: Ձիս նեզ կացութեան մէջ գրին, սակայն ջիշ մը փորձելէ
վերջ որ մերժեմ՝ շամառեցայ: Իրենց հաւանութեամբ՝ " ջէր Ողորմիս " ի
առաջին հատուածը երգեցի եւ իրենք ալ թարգմանեցին Անգլերէնի:

որենց պատճառներն ի յայտ եկաւ որ րիսիոնարական դպրոցներու արդիւնք է իրենց շայ յկեղեցիէն շեղումը՝ միայն մէկ սերունդ ետ: Օտարներու ներկայութեան շուրջ խօսիլ:

Հոն եղազ քիչկներէն մէկուն կինը Եպիսկոպոսական յկեղեցի կը յաճախէ եղեր եւ կ'ըսէր թէ շայնր կան որ հոն կ'երթան: Այն ատեն ոչինչ ըսի բայց ճիշդ նախքոյ օրը ես ինծի կը խորհէի թէ արդիոք հոս Եպիսկ. յկեղեցի կայ: Անոնք մեզի ամենէն մօտը կը նկատուին: Երբ Կթողիկոսը Սան Ժրանչիսքօ պատարագեց՝ Եպիսկ. յկեղեցիէն տրամադրուեցաւ: Դա եւ Սան Հօզէի մէջ որ յկեղեցի չկայ տակաւին՝ Եպիսկ. յկեղեցիի մէջ ժամերգութիւն կ'ընեն: Անկարելի է որ Ենուանդին մենք ալ նման կարգադրութիւն մը կարենանք ընել հոս: Ասիկայ երազային թուելով հանդերձ՝ շատ հեռու ալ չէ իրականացնելու կարելիութիւնը: Այդ մասին լրջօրէն սկսած ենք եմ մտածել: Եթէ յաջողինք՝ իսկական ծառայութիւն մը ըրած կ'ըլլանք շատերու: Եւ ինչու չէ՝ թերեւս ոմանք ալ կը վերադառնան իրենց եկեղեցիէն: Այս կ'ըսեմ որովհետեւ Սան Հօզէի մէջ գոնէ երեք քաղմանգամ ընտանիք գիտեմ որ նոյն կացութեան մէջ են, այսինքն յայտարարած են թէ պիտի դառնան ճայ յկեղեցիին:

Կը փափաքիմ գիտնալ թէ վերոյիշեալ ծրագրին համաձայն էք: Դա եւ եթէ այո՝ կը գործակցիք ինծի: Եթէ Ենուանդ յաջողցնենք՝ Սուրբ Զատիկի մասին եւս կը ծրագրենք նոյնը եւ աւելիքն:

Եթէ սկզբունքով համաձայն էք՝ անհրաժեշտ կը դառնայ գէթ մի քանի փորձ ընել: Ահ այդ՝ գոնէ երեք փորձ եթէ կարենանք ընել, օրինակի համար Կիրակի Հոկտ 22, Նոյեմբեր 5 եւ Նոյ. 19. Կրնանք մենք գմեզ դառնել ու ըստ այնմ դիմումը ընել Կիրակի Զուեկար 7ի համար՝ որ մեր Ենուանդն է:

Փորձերու համար ես ձեզի կուգամ՝ ձեր ուզած ժամուն, եւ մասնաւոր կերպով կը շեշտեմ որ ճաշի խնդիր բնաւ չստեղծէք: Զեր որոշելիք ժամուն կուգամ, փորձը կընենք ու կը դառնամ: Այդպիսով աւելի կը դիւրանայ: Նոյն ատեն յկեղեցեկան ժամերգութիւն ալ ըրած կ'ըլլանք եւ թերեւս այդ օրերէն մէկը կը պատահի որ ձեր թռուսիկները քովի սենեակէն լսեն, նաեւ ձեր գուտարն ու փեան, որով ինքնաբերաբար անոնց ալ առիթը ստեղծած կ'ըլլաք լսելու՝ առանց որ ստիպէք, կամ առաջակէք ներկայ ըլլալ ու մերժուիք:

Շատ շատ շնորհակալ եմ որ ինծի ըսիք որ առանձինը յկեղեցի ընելու տեղ մեզի եկուր միասին ընենք: Ահ այդ պզտիկ առաջարկը Ենուանդ տուաւ վերոյիշեալ ծրագրի մասին: Իսկ եթէ յառաջիկայ Կիրակիի համար կարենանք գոնէ գոնէ կէս կամ մէկ ժամ՝ թէ փորձ եւ թէ ժամերգութիւն ընելու՝ միասին կ'ըսենք այն Տէր Իրողութիւն որ նամակով մը խնդրուած է Սան Հօզէէն՝ շեղմանը հաւատացեալի մը կողմէ որ անկեղեցիօրէն Հիւանդանոց փոխադրուելու կացութեան մէջ՝ յայտը գրած է Ամենակալն Աստուծոյ:

Եթէ չի կարենաք յարմար ժամանակ մը որոշել այս Կիրակիի համար՝ կը խնդրեմ որ բարեհաճիք գէթ առանձինն Տէր Իրողութիւն մը ըսել՝ վերոյիշեալ հաւատացեալին համար ու ես ալ առանձին կ'ըսեմ:

Յարգանք

Զերդ՝

ճժ. Դահան Սելջօնքեան

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԳԱԼԻՑՈՒՆԻՈՑ**

**ԱՅՐԱԿԷՆ ԵՎԻԿՈՒԳՈՍ ՎԱՐԺԱԳԵՏԵԱՆ
Էպարխիա**

**RT. REV. BISHOP PAPKEN VARJABEDIAN
PRIMATE**



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH
OF CALIFORNIA**

**3200 WEST ADAMS BOULEVARD
LOS ANGELES 18, CALIFORNIA**

**REPUBLIC 4-7878
OR REPUBLIC 1-2148**

24 Հոկտեմբեր, 1961

Յարգելի եւ Սիրելի
Բժիշկ Եւհան Սեւյոնքեան.

Բարեշնորհ Սարկաւազ.

Հաճոյք էր դարձեալ լսել Ձեզմէ: Ուրախ եմ որ գրած եւ հարցուցած
էիք Սարկաւազութեան աստիճանի մասին:

Ստորեւ կը պատասխանենք՝ համաձայն նուիրապետական կարգին եւ Հայց.
Եկեղեցւոյ ձեռնադրութեան Մաշտոցին:

Ա. Եկեղեցւոյ փոքր աստիճաններն են հետեւեալները. - 1. Դոնապան, 2. Ըն-
թերցող, 3. Երզմնեցուցիչ, 4. Ճահընկալ, որոնք կը կոչուին Դպրութեան առաջին չորս
աստիճաններ: 5. - Հինգերորդ աստիճանն է ԿԻՍՄՍԱՐԿ՝ ԻՍԳՈՒԹԻՒՆԸ, որ դարձեալ դպրու-
թեան աստիճան մըն է եւ միայն դատարկ Սկիհը եւ այլ եկեղեցական անօթներ կրնայ
ձեռնել: Այս աստիճանը կը կոչուի նաեւ Ուրարակրութեան Աստիճան:

Բ. Սարկաւազութիւն: - Դուք Սարկաւազ ձեռնադրուած էք. այս վեցերորդ
աստիճանն է: Սարկաւազը իշխանութիւն ունի Աւետարան կարգալու (Ս. Պատարագի ձաշու
Աւետարանը), Վերաբերում ընելու եւ խնկարկելու:

Աւագ Սարկաւազութիւնը պարզ տիտղոս մը կամ՝ պատուանուէն մըն է. մեր
Մաշտոցին մէջ նման աստիճան մը չկայ. զայն կրնանք նկատել հաստարներու մէջ
առաջինը: Եթէ եկեղեցւոյ մէջ շատ մը սարկաւազներ կան, անոնցմէ տարեցը թերեւս
այդ անունը կրէ Եպիսկոպոսին արտօնութեամբ. այնպէս՝ ինչպէս Աւագ Քահանայութեան
անունն է (եւ ոչ թէ կարգը) քանի որ ձեռնադրութեամբ չի տրուիր:

Գ. - Թեմի մը Եպիսկոպոսը եթէ արտօնէ, Սարկաւազ մը կրնայ, բացառիկ պա-
րագաներու մէջ, Ս. Հաղորդութիւն տալ: Եթէ անհրաժեշտութիւն ներկայանայ, կըր-
նայ առ այդ գրել Գերշ. Տ. Սիոն Արք. ին, որպէսզի պէտք եղած հրահանգը տայ
առ որ անկ է: Հաւանաբար, Ձեզի մօտիկ Հայ եկեղեցական է մը կարենայ Ս. Հաղոր-
դութիւն ստանալ:

Հետաքրքրական էր Տիկ. Վահանեանի գրած Ձեր նամակը:

Շարունակեցէք Բարի Գործը՝ յօգուտ Հայց. Եկեղեցւոյ. Ձեր եւ Տիկ.
Սեւյոնքեանի բացակայութիւնը շատ զգալի է Սան Հոսէի մէջ:

Ձեր առողջութեան եւ յաջողութեան համար ի սրտէ աղօթող եմ: Ողջունե-
լով Ձեզ երկուսդ՝

Մնամ Ձերմ սիրով եւ Օրհնութեամբ՝

Բարգէն Եպիսկոպոս Վարժապետեան

Dr. Shahan Sevhonkian
216 Chesterfield Rd.
Pittsburgh 13, Pa.
Phone: MU 1-0131

12 ՆՈՅԵՄԲԵՐ 1961

Ազնուայարգ
Տէր Եւ Տիկին Վահանեան-
Բիթսպուրկ

Շատ շնորհակալ եմ որ անյապազ պատասխանեցիք վերջին նամակիս՝ զիս տեղեակ պահելով այստեղի շայնք անտարբերութեանը մասին, Եւ թէ արդէն իսկ օտար եկեղեցիներու կապուած ըլլալնին:

Այդ 16 չոկտեմբերի նամակէս ի վեր ահա մի քանի շաբաթ եւս սահեցան, որոնց ընթացքին չըջօրէն մտածեցի, Եւ հանգեցայ հետեւեալ եզրակացութեան: Պահ մը անտեսելով ամէն ոք, քանի որ Օգոստոս 27էն սկսեալ կանոնաւորաբար ամէն կիրակի շայ եկեղեցւոյ ժամերգութիւն տեղի կ'ունենայ Բիթսպուրկի մէջ, թեւէ պատճառ չէ կարելի նախատեսել որ արգիլէ գէթ իմ բնակավայրիս մէջ Նոյնը Եւ աւելին ընելու: Այս նկատումով, ուրեմն, բացարձակապէս լուռ անցընելէն աւելի լաւ է գէթ ամէն կիրակիի կանոնաւոր ժամերգութիւնը ունենալ: Այս նուազագոյնը որոշ է ուրեմն, Եւ անկախ թեւէ ուրիշի՝ որ եկեղեցւոյն պատկանելէն:

Այս նուազագոյնէն վերջ՝ ինչ որ կարելի ըլլայ ընել աւելի պիտի ջանամ ընել: Եթէ օգուտ մը ունեցաւ՝ լաւ: Եթէ ոչ՝ գէթ կարելին ըրած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունենանք:

Արդ, նկատի ունենալով որ ձեր խոր հաւատքը Եւ եկեղեցասիրութիւնը շատ կը գնահատեմ, գլխաւոր հրաւերս պիտի ըլլայ քեզի: Եթէ ցունվար 7ին Բիթսպուրկ պիտի չըլլաք՝ ցունվար 14ի կիրակիին պիտի թողունք մեր շայկական Եւնուսդի տօնակատարութիւնը: Ուրեմն նախ քան թեւէ ուրիշ քայլ առնելս, կը խնդրեմ որ բարեհաճիք ձեր հաւանութիւնը տալ՝ գէթ մենք երեքս միասին ըլլալու՝ նախընտրաբար ցունվար 7ին, կամ ի հարկին ցունվար 14ին, ինչպէս որ դուք որոշէք: Պահը նախընտրելի է Կ.Վ.Ժ.Պ.ՅՕին որ մինչեւ 4.30 կարենանք աւարտել: Զաշէն վերջ կը խնդրեմ որ բարեհաճիք ընդունիլ ճաշի հրաւեր մը համեստ՝ իմ կողմէ՝ հիւանդանոցի ճաշարանը: Անմիջապէս որ ձեր գրական պատասխանը ստանամ Եւ թուականի ճշգրտմը՝ պիտի ջանամ որ այդ թուականին յարմարեմքս ԲԺ. Եւրոպականները հրատարակեմ՝ զոր ընդունած ենք բայց իմ քսած թուականս իրենց չէր յարմարած: Եթէ ուրեմն եկեղեցի չգան՝ գէթ ճաշին կուգան:

Այս կորիզը ունենալէ ետք թեւէ անպատեհութիւն չեմ տեսներ որ հրաւերներ ուղարկենք թեւէ շայնք որ կրնանք հասցէները ստանալ: Ես յանձն կ'առնեմ հրաւերներու տպագրութիւնը Եւ առաքումը, ինչպէս նաեւ ճաշի հրաւերս կ'որթայ բոլոր անոնց որ եկեղեցական ժամերգութեանց ներկայ կ'ըլլան: Կանխաւ արձանագրութեան հարկ չկայ: Բաւական է որ ժամանակին հասնինք ճաշարան: Եթէ Նոյն իսկ չգան՝ գէթ շայ տառ տեսնելու առիթը պիտի ունենան: Շատեր գիտեմ որ բնաւ շայ տառ չէին տեսած եկեղեցւոյ հրաւեր ստանալէ առաջ: Գէթ պիտի գիտնան նաեւ թէ շայ եկեղեցւոյ աղօթքը հոս եւս կը հնչէ: Իսկ թէ պատահի որ մէկ կամ աւելի անձեր գան՝ վստահ եմ որ շատ ուրախ պիտի զգաք: Առ այդ՝ աւելի հաւանական է որ գան եթէ եկեղեցիի մը մէջ ընենք քան թէ ձեր կամ իմ բնակավայրը: Ուրեմն կը խնդրեմ որ բարեհաճիք պատասխանել հետեւեալ հարցումներուն.-

- 1.-Որ եկեղեցին յարմար կը նկատէք: Բացի իմ գրելիք խնդրագրէս՝ կայ մէկը որ անպաշտօն կերպով ալ խօսի: Անշուշտ եթէ չկայ՝ խնդրո՞ւնք չէ:
- 2.-Ներկայեալ հրաւերի նախագծին վրայ ունի՞ք թեւէ թելագրանք՝ թեւէ

Dr. Shahan Sevhonkian
216 Chesterfield Rd.
Pittsburgh 13, Pa.
Phone: MU 1-0131

12 նոյեմբեր 1961

Պատուարժան Հոգաբարձու թիւն
Քլիվլենտի Հայ Առաքելական Եկեղեցւոյ՝
Քլիվլենտ, Օհայօ

Երազրած ենք այս տարի Եկեղեցական ժամերգութեամբ մը տօնել Հոս եւս՝
Հայոց Սուրբ Ծնունդը եւ հրաւեր ուղարկել բոլոր Հայոց, որքան որ կարելի
հասցէներ ունենալ, հոգ չէ թէ տարբեր Եկեղեցիներու պատկանին:

Վահանեաններէն հաճոյքով կը լսենք ձեր Եկեղեցանուէր գործունէութեանց
մասին, ինչ որ մեծապէս կը գնահատենք: Առայժմ կը փափաքինք գիտնալ թէ
կան արդիօք ձեր Եկեղեցւոյ ծառայող կամաւոր Դպիրներ կամ Սարկաւազներ
որոնք կրնան թերեւս հոդ ծառայելէ ետք Հոս գալ եւ այստեղի Հայոց եւս
բաժին հանել իրենց ծառայութենէն: Եթէ այո՝ կը խնդրենք որ բարեհաճիք
անունները հաղորդել որ աւելցնենք մեր հրաւերին վրայ՝ որուն առժամեայ
մէկ օրինակը կը ներփակենք:

Եթէ փոխանակ ցունկար 7ի մէկ շաբաթ վերջի յետաձգենք ինչ առաւելութիւն
կը տեսնէք:

Կը խնդրենք որ բարեհաճիք ըստ կարելւոյն փութացնել ձեր պատասխանը
որ կարենանք ըստ այնմ ծրագրել:

Կանխապալտ շնորհակալութեամբ ու

Յարգանք,

Չեքդ՝

Dr. Shahan Sevhonkian

Բժ. Շահան Սեւոնքեան

Յ.Գ. Ներփակեալ հրաւերի նախագծին մասին կամ այլ ոեւէ թելագրանք
շնորհակալութեամբ պիտի ընդունինք:

Նոյն

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Բիթսպուրկ, Բէնսիլվանիա

Հ Ր Ա Ի Է Ր

Բիթսպուրկի եւ Շրջակայքի Բոլոր Հայերուն

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ Տօնին Առթիւ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Վայր՝ Սէնթ Անտրուզ Էբիսքօբը Զըրշ---5801 Հէմքըն

Թուական՝ Կիրակի, 7 Յունվար 1962, Կ.Վ.Ժամը 2:30ին

Մասնակցութիւն՝	Տիկին	Վահանեան	Դպրուհի
	Տիար	Վահանեան	Դպիր
	Բժիշկ	Շահան	Սեւյօնքեան
			Սարկաւազ

Ժամերգութենէն անմիջապէս վերջ՝ խմբական ճաշ եւ ընկերական ժամ:

Ամէն ոք սիրով կը հրաւիրուի: Հանգանակութիւն պիտի չըլլայ:

Եկէք եւ միասին տօնենք Հայոց Սուրբ Ծնունդը:

Ծանօթ.-27 Օգոստոս 1961էն սկսեալ՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ
Ժամերգութիւն կը կատարուի Բիթսպուրկի մէջ կանոնաւորաբար
ամէն Կիրակի՝ կամ 216 Զէսթըրֆիլտ րօտ եւ կամ 1750 Բայընիըր Էվընիւ
Ամէն ոք սիրով կը հրաւիրուի:

Մանրամասնութեանց համար՝ Հեռաձայնել Բժ. Շ. Սեւյօնքեանի՝ MU1-0131

*
* *

ARMENIAN APOSTOLIC CHURCH
Pittsburgh, Pennsylvania

I N V I T A T I O N
To All Armenians In Pittsburgh and Vicinity

On The Occasion of the
ARMENIAN CHRISTMAS

ARMENIAN APOSTOLIC CHURCH SERVICES

Place: St. Andrew's ^{EPISCOPAL} Church---5801 Hampton
Date: Sunday, January 7, 1962 at 2.30p.m.
Participating: Mrs. Vahanian (Tbroochi)
Mr. Vahanian (Tbir)
Dr. Shahan Sevhonkian (Deacon)

Right after the Church Services, Group Dinner and Social Hour.
Everybody is welcome. There will be no collection.
Come and let us celebrate the Armenian Christmas together.
Note: Starting August 27, 1961, Armenian Apostolic Church Services
are being performed in Pittsburgh regularly every Sunday,
either at 216 Chesterfield Rd. or 1750 Pioneer Ave.
Everybody is welcome.
For information, call Dr. Sh. Sevhonkian, MU I-0131